ԹԱՆԳԱՐԱՆ ԵՎ ՎԵԲԿԱՅՔ. ԳԱՂԱՓԱՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀՐԵԻՑ ՀՈԼՈՔՈՍՏԻՆ ՆՎԻՐՎԱԾ ԵՐԵՔ ԹԱՆԳԱՐԱՆՆԵՐԻ ՕՐԻՆԱԿՈՎ

ԿՈԲԵԼՅԱՆ Խ. Ս.

Յուրաքանչյուր թանգարան՝ որպես սոցիալական ինստիտուտ, որոշակի գաղափարի կամ քաղաքական ուղղության կրող և տարածող է, իսկ տվյալ թանգարանի վեբկայքը ենթադրում է նույն գաղափարների և քաղաքականության տարածումը վիրտուալ աշխարհում: Ուշագրավ է, թե ինչպես միևնույն երևույթը կարող են տարբեր ձևերով ներկայացնել տարբեր վեբկայքեր, ինչը, մեր համոզմամբ, տվյալ երկրի վարած քաղաքականության և գաղափարական արժեքների հետևանքն է: Կարևորելով վեբկայքի դերը թանգարանի գաղափարախոսության և քաղաքականության մեջ՝ ստորև ներկայացնենք խնդիրը Հրեից հոլոքոստին նվիրված երեք թանգարանների վեբկայքերի օրինակով:

Հրեից հոլոքոստին նվիրված յուրաքանչյուր թանգարան մարդկության պատմության այս սև էջը լայն հասարակությանը ներկայացնելու համար ունի իր ուրույն մեխանիզմները: Դրանցից մեկն էլ տվյալ թանգարանի վեբկայքն է: Այն ոչ միայն հասարակությանը հարուստ տեղեկատվություն փոխանցելու հզոր միջոց է, այլև այդ թանգարանի այցեքարտը: Սա կարելի է բացատրել մի քանի գործոններով: Առաջին, եթե թանգարանը որոշակի ժամանակահատվածում կարող է ընդունել և սպասարկել սահմանափակ քանակությամբ այցելուներ, ապա վեբկայքը նույն ժամանակահատվածում կարող է սպասարկել անսահմանափակ թվով օգտվողների: Երկրորդ՝ բոլորը չէ, որ ի վիճակի են այցելել տվյալ թանգարանը՝ կախված մի շարք հանգամանքներից, իսկ վեբկայք այցելելը շատ ավելի հասանելի է, չի խլում շատ ժամանակ, և դա կարելի է անել օրվա յուրաքանչյուր պահի: Սակայն վեբկայքը չունի այն ներգործությունը օգտվողի վրա, ինչ թանգարանը՝ այցելուի: Եթե թանգարանում կան այցելուներին ամեն հարցում օգնող հատուկ աշխատողներ, ապա վեբկայքում օգտվողը միայնակ է և իր առջև ծառացած խնդիրը պետք է լուծի ինքնուրույն, այդ իսկ պատճառով չափազանց կարևոր է վեբկայքի ճիշտ կառուցված լինելը, օգտվողին լայն հնարավորություններ ընձեռելը, նրա հետ աշխատելը, դա շարունակական դարձնելը և, վերջապես, նյութի ճիշտ մատուցումը: Ահա այս դրույթներով կփորձենք վերլուծել Հրեից հոլոքոստին նվիրված հետևյալ երեք թանգարանների վեբկայքերը.

ՀՀՀԿ – Հունգարիայի Հոլոքոստի հուշային կենտրոն – http://old.hdke.hu/

Յադ Վաշեմ – Հոլոքոստի նահատակների և հերոսների [մասին] հիշողության [ապահովման] իրավասու մարմին – http://www.yadvashem.org/

ՄՆՀՀԹ – Միացյալ Նահանգների Հոլոքոստի հուշային թանգարան – http://www.ushmm.org/

Վեբկայքերի ընձեռած հնարավորությունները տարալեզու օգտվողներին: *Նախ նշենք, որ վերոհիշյալ երեք վեբկայքերը ի սկզբանե նախատեսված են լեզվական տարբեր համայնքների համար: Այսպես, եթե ՀՀՀԿ-ի վեբկայքն ընդամենը երկու լեզվով է (հունգարերեն և անգլերեն), իսկ Յադ Վաշեմինը՝ վեց (իվրիտ, անգլերեն, իսպաներեն, ռուսերեն, արաբերեն և պարսկերեն), ապա ամենալայն լեզվական հնարավորություններն է առաջարկում ՄՆՀՀԹ-ն տասնչորս լեզու (անգլերեն, ֆրանսերեն, իսպաներեն, իտալերեն, ռուսերեն, թուրքերեն, պորտուգալերեն, արաբերեն, պարսկերեն, ուրդու, հինդի, հունարեն, ինդոնեզերեն, հեշտացված չինարեն): ՀՀՀԿ-ն իր առաջարկած երկու լեզվով նպատակաուղղված է բավարարել թերևս առավելապես եվրոպական համայնքի օգտվողների պահանջները, որոնք հետաքրքրված են Հոլոքոստը Եվրոպայում և Հունգարիայում թեմաներով: Ենթադրում ենք, որ Յադ Վաշեմի կայքն իր առաջարկած վեց լեզուներով նպատակ ունի տեղեկատվությունը հասանելի դարձնել առավելապես Իսրայել պետությանը հարակից աշխարհագրական տարածքում, ինչպես նաև հրեական սփյուռք ունեցող ընդարձակ տարածաշրջաններում[1]: Ինչ վերաբերում է ՄՆՀՀԹ-ին, ապա այս վեբկայքը իր լեզուների քանակի շնորհիվ հասանելի է գրեթե ամբողջ աշխարհին: Սակայն նկատենք մի հետաքրքիր փաստ, որ կայքում բացակայում են գերմաներենը և ճապոներենը, բայց կա հունարենը, որին անհամեմատ ավելի քիչ մարդ է տիրապետում, քան վերոհիշյալ երկուսին:*

Այսպես, ՀՀՀԿ-ի վեբկայքը իր առաջարկած լեզուների շարքում ունի ՄԱԿ-ի պաշտոնական լեզուներից ընդամենը մեկը, Յադ Վաշեմի վեբկայքը՝ չորսը, իսկ ՄՆՀՀԹ-ի վեբկայքը՝ բոլոր պաշտոնական լեզուները:

Երեք վեբկայքերն էլ ունեն որոնողական համակարգ, որը հնարավորություն է տալիս օգտվողին միանգամից փնտրելու իրեն հետաքրքրող նյութը: Յադ Վաշեմի կայքն ունի նաև quick links-ի (արագ հղում) հնարավորություն: Կայքերից յուրաքանչյուրն ունի արխիվային մեծ բազա (հատկապես ՄՆՀՀԹ-ի և Յադ Վաշեմի կայքերը), էլեկտրոնային գրադարան (բացառությամբ ՀՀՀԿ-ի վեբկայքի): ՄՆՀՀԹ-ի և Յադ Վաշեմի կայքերն ունեն մուլտիմեդիայի բաժին (տեսաֆիլմեր, տեսադասախոսություններ, սլայդշոուներ, պատկերասրահներ): Այս պարագայում վեբկայքը դառնում է միջնորդ ոչ միայն հետաքրքրվողի, այլ նաև մասնագետի (պատմաբան, ցեղասպանագետ և այլն) և օգտվողի միջև, երբ վերջինս ցանկության դեպքում կարող է հսկայական տեղեկատվություն ստանալ հենց միայն տեսադասախոսություններից և կամ օգտագործել դրանք կրթական գործընթացում: Սակայն պետք է փաստել, որ տեսաֆիլմերը և տեսադասախոսությունները հիմնականում անգլերենով են ներկայացված կամ երբեմն էլ հեղինակի մայրենի լեզվով՝

---

[1] *Այդպիսիք կարելի է համարել Լատինական Ամերիկան և հետխորհրդային երկրները, քանի որ երկու տարածաշրջաններում, տարբեր տվյալներով, մոտավորապես 300–500 հազ. հրեա է բնակվում:*

անգլերեն և եբրայերեն տողատակերով: Առցանց ցուցադրությունների և թանգարանների ցուցադրության հատվածների տեսաշարերի միջոցով օգտվողի համար հնարավորություն է ստեղծվում քիչ թե շատ ծանոթանալու թանգարանի ցուցադրությանը:

Վեբկայքերից երկուսը (բացառությամբ ՀՀՀԿ-ի) հնարավորություն են ստեղծում միանալու կայքերի նորություններին էլեկտրոնային փոստի միջոցով, իսկ սոցիալական ցանցերի միջոցով հետևելու կայքերի նորություններին:

Վեբկայքերի կողմից օգտվողների հետ տարվող աշխատանքը և այդ աշխատանքի շարունակականությունը: Վերոհիշյալ երեք վեբկայքե-րից ՀՀՀԿ-ի վեբկայքը գրեթե չի նախատեսում երկարատև աշխատանք օգտվողների հետ. այն նախատեսված է ճանաչողական տեղեկատվություն մատուցելու համար: Վեբկայքը նախ ներկայացնում է թանգարանը, որոշակի բավարար տեղեկատվություն է առաջարկում Հոլոքոստի և հատկապես Հունգարիայում տեղ գտած հրեաների ցեղասպանության մասին, ապա նորությունների, հավաքածուների մասին: Ունի նաև առանձին բաժին կրթական ծրագրերի վերաբերյալ: Մեր կարծիքով, կայքի հիմնական նպատակը հակիրճ, բայց բովանդակալից տեղեկատվություն տրամադրելն է օգտվողին և նրան նախապատրաստել թանգարան այցելելու համար:

Հակառակ դրան՝ մյուս երկու վեբկայքերը, թվում է, ստեղծում են բոլոր անհրաժեշտ պայմանները օգտվողների հետ աշխատանքը շարունակական դարձնելու համար: Օգտվողը վերոհիշյալ կայքերում էլեկտրոնային փոստի միջոցով կարող է բաժանորդագրվել պարբերաբար թարմացվող և ավելացվող նորություններին ու լուրերին կամ սոցիալական կայքերի օգնությամբ միանալ կայքին: Դա կապեր է առաջացնում օգտվողի և կայքի պատասխանատուների միջև, որը և առաջին պայմաններից է օգտվողի հետ աշխատանքը շարունակական դարձնելու համար: Սա «ստիպում» է օգտվողներին պարբերաբար «հիշել» կայքի մասին և ժամանակ առ ժամանակ այցելել կայք, ծանոթանալ նոր նյութերին, միևնույն ժամանակ մատուցել նաև հին նյութերը: Ենթադրում ենք, որ կայքն այս եղանակով կարող է հասցեատերերի «ուշադրությունը հրավիրել» իր համար կարևոր համարվող յուրաքանչյուր թեմայի շուրջ:

Խոսելով շարունակական աշխատանքի մասին՝ ենթադրում ենք, որ այն մեծ քանակի նյութը, որն առկա է կայքերում, պետք է նաև ճիշտ դասավորված լինի, քանի որ օգտվողը չի կարող այդ ահռելի տեղեկատվությունը մեկ կամ մի քանի օրում ընկալել: Դրա համար անհրաժեշտ է ճիշտ հերթականությամբ և դասավորությամբ մատակարարել նյութը, որպեսզի օգտվողը չխճճվի դրա մեջ, նույն նյութը մի քանի անգամ չկարդա կամ ընդհակառակը՝ որոշ նյութեր ընդհանրապես չկարդա: Սա ամենադժվար խնդիրներից է, որին բախվում են այս բնույթի վեբկայքերը: ՄՆՀՀԹ-ի կայքում տեսնում ենք խնամքով արված աշխատանք. օրինակ՝ Ցեղասպանության բաժնի առաջին պատուհանը վերնագրված է այսպես՝ What is Genocide? (Ի՞նչ է ցեղասպանությունը): Նման մոտեցման նպատակն է նախ բացատրել երևույթը, ապա երկրորդ պատուհանի օգնությամբ օգտվողին պատմական անցյալից տեղափոխել

կանխատեսելի ապագա՝ Who is at Risk? (Ո՞վ է վտանգի մեջ): Այս եղանակով կայքի ամեն բաժնի պատուհանները լրացնում են մեկը մյուսին՝ քայլ առ քայլ մոտեցնելով նպատակին: Այս հարցում Յադ Վաշեմի կայքը գրեթե չի զիջում ՄՆՀՀԹ-ի կայքին, սակայն օգտվողին չի առաջարկում տեղեկատվական այն լայն շրջանակները, որն առաջարկում է ՄՆՀՀԹ-ի կայքը: Ենթադրվում է, որ Յադ Վաշեմի կայքը հիմնականում աշխատելու է այն օգտվողների հետ, ովքեր հետաքրքրված են Հրեից հոլոքոստով, մինչդեռ ՄՆՀՀԹ-ի կայքը հնարավորություն է տալիս աշխատելու ոչ միայն Հոլոքոստով հետաքրքրված օգտվողների, այլև ընդհանրապես ցեղասպանության փաստով հետաքրքրվող օգտվողների հետ:

Նյութի մատուցումը վեբկայքերի կողմից: *Անդրադառնալով նյութի մատուցման ձևին՝ ականատես ենք հետևյալ երեք տարբեր մեթոդների.*

1. ՀՀՀԿ-ի վեբկայքի մատուցած տեղեկատվությունից օգտվողը հանգում է այն մտքին, որ կայքի առանցքային նպատակն է ներկայացնել Հոլոքոստը Հունգարիայում (դա նշվում է նաև կայքի ցուցադրության (Exhibitions) բաժնում): Այս կայքը օգտվողին չի ընձեռում Հրեից հոլոքոստի մասին ամբողջական տեղեկատվություն ստանալու հնարավորություն, այլ նպատակաուղղված է միայն ներկայացնելու այն ամենը, ինչ տեղի է ունեցել Հունգարիայում (անդրադարձը Հոլոքոստի փաստին եվրոպական այլ երկրներում ներկայացված է միայն աղյուսակի տեսքով), ընդ որում, ներկայացվող նյութը բավական համառոտ է, բայց և բովանդակալից: Հավելենք, որ այստեղ «Հոլոքոստը Հունգարիայում» վերնագրի տակ ներկայացվում է ոչ միայն հրեաների, այլ նաև գնչուների և Հունգարիայի այլ քաղաքացիների տանջանքները, բռնագաղթը և սպանությունները: Ավելին, նշվում է, որ շատ հրեաներ սպանվել են որպես Հունգարիայի քաղաքացիներ: Այսինքն՝ կայքի նպատակն է դատապարտել ցեղասպանությունը, ֆաշիզմը, նացիզմը, ռասիզմը և ազգային, կրոնական խտրականություններն ընդհանրապես, պայքարել հակասեմական տրամադրությունների դեմ, նաև ինչ-որ չափով մեղմել Հունգարիայի մեղքը՝ մեղավորության առյուծի բաժինը թողնելով նացիստական Գերմանիայի ուսերին:

2. Յադ Վաշեմի վեբկայքի մատուցած տեղեկատվությունից հանգում ենք այն մտքին, որ կայքի նպատակը խիստ տարբերվում է մյուս երկու կայքերի նպատակներից, չնայած առաջին հայացքից երեքն էլ նույն խնդրին են անդրադառնում: Հենց թանգարանի անվանումից արդեն պարզ է դառնում նաև բուն թանգարանի և հետևաբար նաև վեբկայքի նպատակները՝ Յադ Վաշեմ - Հոլոքոստի նահատակների և հերոսների [մասին] հիշողության [ապահովման] իրավատու մարմին: Իսկ Յադ Վաշեմ նշանակում է «ձեռք (հուշարձան) և անուն»: Կայքի նպատակը պատմական արդարությունը պահպանելն է և Հոլոքոստի՝ չնայած միջազգայնորեն ճանաչված լինելուն, որպես XX դարի եզակի և բացառիկ ոճրագործության փաստի անվերապահորեն ընդունումը աշխարհի կողմից: Վեբկայքի Holocaust

բաժնի About the Holocaust (Հոլոքոստի մասին) պատուհանում տեքստը սկսվում է հետևյալ կերպ.

«Այսպիսով, յոթ ամսվա ընթացքում ես կորցրեցի իմ հորը, եղբորը և մորը: Ես միակն եմ, որ փրկվեց: Սա այն է, ինչ գերմանացիներն արեցին մեզ հետ, և սրանք բաներ են, որոնք երբեք չպետք է մոռացվեն: Մյուս կողմից մենք վրեժխնդիր եղանք. փրկվածները ի վիճակի եղան աճելու հոյակապ ընտանիքների՝ նրանց թվում և ես: Սա վրեժ է և մխիթարություն: ***Ժվի Կոպոլովիչ****»:*

«Հոլոքոստը նացիստական Գերմանիայի կողմից վեց միլիոն հրեաների սպանությունն էր: Եթե հրեաների հետապնդումը նացիստների կողմից սկսվեցին 1933-ին, ապա զանգվածային սպանություններն իրականացվեցին Երկրորդ համաշխարհային պատերազմի ժամանակ: Գերմանացիներից և նրանց համակիրներից պահանջվեց չորս և կես տարի սպանելու վեց միլիոն հրեա»:

Ի տարբերություն ՀՀՀԿ-ի վեբկայքի՝ սույն կայքը ներկայացնում է Հոլոքոստը որպես բացառիկ դեպք մարդկության պատմության մեջ և ցույց տալիս նացիստական Գերմանիայի հրեշավորությունը, միևնույն ժամանակ կենտրոնանում է միայն Հրեից հոլոքոստի վրա, այսինքն՝ տեղեկատվություն է մատուցում միայն հրեաների ցեղասպանության մասին: Վերոբերյալ հատվածը մեր ասվածի դրսևորումներից է: Առաջարկվող տեղեկատվությունը բազմազան է և չափազանց ծավալուն, որն ընդգրկում է Հոլոքոստին վերաբերող ամեն տեսակի նյութ, և դա առաջարկվում է տարբեր ձևաչափերով:

3. Ի հակադրումն այս երկու թանգարանների վեբկայքերի՝ ՄՆՀՀԹ-ի վեբկայքն ունի նյութի մատուցման հետաքրքիր ձև: Ելնելով վեբկայքի մատուցած տեղեկատվությունից՝ հանգում ենք այն մտքին, որ կայքի առանցքային նպատակն է ոչ թե ցույց տալ միայն Հրեից հոլոքոստը, այլև ներկայացնել, թե ինչ է ցեղասպանությունը, և ինչպիսի ցեղասպանություններ են եղել կամ ինչպիսիք կարող են լինել: Կայքում զետեղված հսկայական նյութը նպատակ է հետապնդում ոչ միայն տեղեկացնել Հոլոքոստի մասին և քննադատել այդ ոճրագործությունը, այլև ներկայացնել աշխարհում կատարված նմանատիպ իրողությունները, կանխատեսել հնարավոր արհավիրքները, և որ ամենակարևորն է՝ օգտվողի «սեփականությունը» դարձնել այն, սակայն դա անել ոչ թե հրեաների նկատմամբ խղճահարություն առաջացնելով կամ նացիստների նկատմամբ ատելություն սերմանելով, այլ ուղղակի հանգեցնել նրան, որ նա, ով Երկիր մոլորակի քաղաքացի է, դատապարտի ոչ միայն ցեղասպանության որևէ կոնկրետ դեպք, այլ երևույթն ընդհանրապես:

Անդրադարձներ Հայոց ցեղասպանությանը: *Երեք վեբկայքերի որոնողական համակարգերով փնտրվել է հետևյալ բառակապակցությունը՝ "Armenian Genocide", և արդյունքները հետևյալն են. ՀՀՀԿ-ի վեբկայք՝ զրոյական, ՄՆՀՀԹ-ի վեբկայք՝ ընդամենը 37, Յադ Վաշեմի վեբկայք՝ 43800 արդյունք (վերջին տվյալը բացատրվում է նրանով, որ կայքը հղում է անում խոշոր որոնողական հա-*

մակարգի (Google), և այդ իսկ պատճառով արդյունքները սպասվածից ավելին են):

Եթե ՀՀՀԿ-ի վերկայքի արդյունքը սպասելի էր, քանի որ ինչպես արդեն նշվեց վերևում՝ կայքը ներկայացնում է միայն Հրեից հոլոքոստը Հունգարիայում և մասամբ Եվրոպայում, ապա նույնը չենք կարող ասել ՄՆՀՀԹ-ի վերկայքի մասին: Վերջինս անդրադարձ է կատարում բոլոր ցեղասպանություններին, անգամ ներկայացնում է վտանգի մեջ գտնվող ազգերին: Եվ այն փաստը, որ XX դ. առաջին խոշոր ցեղասպանությանը այս կայքը շատ թույլ անդրադարձ է կատարում, շատ ցավալի է, հատկապես այն դեպքում, երբ նույն կայքի որոնողական համակարգը "Genocide in Ukraine"-ի դեպքում բերում է 246 արդյունք, "Genocide in Sudan"-ի դեպքում՝ 708 արդյունք և "Genocide in Chechnya"-ի դեպքում՝ 312 արդյունք: Նաև հետաքրքիր է որ "Genocide in Turkey"-ի դեպքում՝ 34 արդյունք, և "Genocide in Russia"-ի դեպքում՝ 395 արդյունք[2]:

Եվ վերջապես առաջանում է մի հարց ևս. ինչպե՞ս է ստացվում, որ միևնույն երևույթը տարբեր վերկայքերում տարբեր ձև է ներկայացված, կամ տրվող տեղեկատվության հերթափոխը տարբեր ասոցիացիաներ է առաջացնում օգտվողների մեջ:

Մեր կարծիքով, տվյալ երեք թանգարանները ներկայացնում են իրենց երկրների պաշտոնական դիրքորոշումը այդ հարցի շուրջ, որը և արտացոլված է թանգարանների վերկայքերում: Այդ պատճա- ռով ստորև կփորձենք համառոտ անդրադառնալ թանգարանների ստեղծման և վարած հիմնական քաղաքականության մասին, որից և հնարավոր կլինի հետևություններ անել:

1. Ի տարբերություն Յադ Վաշեմի և ՄՆՀՀԹ-ի՝ ՀՀՀԿ-ի հիմնադրման խնդիրը փոքր-ինչ այլ է. այն կապված է ավելի շատ հակասեմական տրամադրությունների դեմ պայքարելու հետ, քանի որ մինչև նացիստական Գերմանիայի կողմից Հունգարիայի օկուպացումը[*] այնտեղ Միկլոշ Հորտիի կառավարությունն ընդունել էր առաջին, երկրորդ և երրորդ «հրեական օրենքները», որոնք սահմանափակում էին հրեական համայնքի իրավունքները: Հունգարիան համարվում է մեղսակից Հոլոքոստի մեջ: Եվ Հունգարիայում Հո-

---

[2] Այս առիթով թանգարանի հետազոտական բաժնում 2009-2010 թթ. յոթ ամիս գիտական դրամաշնորհով հետազոտություններ իրականացրած ազգագրագետ Հարություն Մարությանը նկատում է. «Նման մոտեցումն ունի իր հիմքը. բանն այն է, որ թանգարանը պետական կառույց է, այն իր պաշտոնական տեղեկատվության մեջ պարտավորված է արտացոլել ԱՄՆ քաղաքականության գործող դրույթները: Միևնույն ժամանակ պետք է նկատել, որ թանգարանի հետազոտական բաժիններում չկա որևիցե գիտաշխատող, որը կասկածի տակ դնի Հայոց ցեղասպանության իրողությունը, որի շուրջ բազմիցս հոդվածներ են տպագրվում թանգարանի գիտական պարբերականի՝ «Հոլոքոստի և ցեղասպանության ուսումնասիրություններ» ("Holocaust and Genocide Studies") էջերում: **Մարության Հ.,** Հայոց ցեղասպանության և հրեաների Հոլոքոստի հիշողության կառուցվածքային առանձնահատկությունները (Պատմաբանասիրական հանդես, 2011, N 2, էջ 41):

[*] Մարտի 19, 1944 թ., «Գործողություն Մարգարետ»:

լոքոստին նվիրված հուշային կենտրոնի բացումը 2004 թվականին, մեր կարծիքով, ավելի շատ նպատակաուղղված էր նվազեցնելու հակասեմական տրամադրությունները: Այդ փաստի մասին է խոսում նաև 2010 թ. փետրվարի 22-ին ընդունված օրենքը, որը Հոլոքոստը մերժելու համար նախատեսում է քրեական հետապնդում և մինչև 3 տարի ազատազրկում:

2. Յադ Վաշեմի հուշահամալիրը հիմնադրվել է 1953 թ. պետության խորհրդարանի որոշմամբ, և ազգային հուշահամալիրի գործառույթները հստակորեն ամրագրված են հիմնադիր օրենքում: Օրենքի ինը հոդվածները պարզաբանում են, թե ով պետք է հիշվի. զոհերը, ընտանիքները, համայնքները, հերոսները, հրեա զինվորները, պարտիզանները, վերջիններիս օժանդակողները և նրանք, ովքեր փորձում էին բարձր պահել իրենց արժանապատվությունը: Այսպիսով, ինը հոդվածներից վեցը հասցեագրված են պայքարին, դիմադրությանը: Սա բավական հստակ դրույթ է: Դիմադրությանը, պայքարին լուրջ ուշադրություն դարձնելը Յադ Վաշեմի հիմնական խնդիրներից է: Զնավորումից ի վեր Յադ Վաշեմն իր գործառույթներից մեկը դիտում է զոնե խորհրդանշական գերեզման առաջարկելն այն մեծաքանակ զոհերին, որոնք չունեն իրական գերեզման:

Չնայած այն փաստին, որ ներկայումս Յադ Վաշեմն ավելի լայն շրջանակներով է գործունեություն ծավալում, մեր կարծիքով, առանցքային խնդիրը հիմնականում չի փոխվել:

Յադ Վաշեմի պարտականությունն էր համարվում՝ ա) հավաքել և հրատարակել Հոլոքոստին նվիրված նյութեր, բ) հիշողության պահպանման և հիշողության հավերժացման խնդրի լուծումը, գ) Հոլոքոստի դասերի մասին բարձրաձայնումը[3]:

3. Իսրայելի վարչապետ Մ. Բեգինի ԱՄՆ կատարած պաշտոնական այցի ընթացքում (1978 թ. մայիսի 1-ին) նախագահ Ջ. Քարթերը հայտարարեց Հոլոքոստի հուշահամալիրի պլանի մշակման հանձնաժողովի ստեղծման մասին: Հանձնաժողովի ձևավորման համար պահանջվեց վեց ամիս: Վերջինիս նախագահ ընտրվեց Հոլոքոստը վերապրած և այդ թեմայի շուրջ բազմաթիվ գրքերի հեղինակ Էլիա Վիսլը:

Հանձնաժողովի առաջնահերթ նպատակն էր ամերիկացիներին ցույց տալ նման թանգարանի անհրաժեշտությունը: Տարբեր մոտեցումներ էին դիտարկվում հուշային կառույցի գաղափարը ԱՄՆ պատմության հետ կապելու համար: Այսպես, սկզբում ենթադրվում էր ինտեգրել այն ԱՄՆ պատերազմի վետերանների պատմություններին: Երկրորդ ճանապարհը Հոլոքոստի իրողությունները պատերազմից հետո ԱՄՆ տեղափոխված վերապրողների պատմությունների միջոցով ներկայացնելն էր: Երրորդ ուղին ԱՄՆ արժեքներին ուղղակիորեն հղումն էր: Ենթադրվում էր այդ կերպ

---

[3] *Հարցի շուրջ մանրամասն տե՛ս նաև* **Matthias Haß.** *The Politics of Memory in Germany, Israel and the United States of America (The Canadian Centre for German and European Studies, Working Paper Series Number 9, pp. 6-12);* **Մարության Հ.,** *«Յադ Վաշեմ. Հոլոքոստի մասին հիշողությունն Իսրայելում», http://www.noravank.am/arm/articles/detail.php?ELEMENT_ID=2465&sphrase_id=2531, 22.VI.2007:*

փաստարկել, թե ինչ է պատահում, երբ բացակայում, ոտնահարվում են ամերիկյան հիմնարար արժեքները: Այդ ուղղակի կապն արտահայտված է թանգարանի մուտքին արված երկու արձանագիր մեջբերումների միջոցով, որոնցից մեկը վերցված է Ջորջ Վաշինգտոնից. «ԱՄՆ կառավարությունը... չի ողջունում անհանդուրժողականությունը, չի աջակցում հալածանքներին», իսկ մյուսը՝ Անկախության հռչակագրից. «Բոլոր մարդիկ հավասար են ստեղծված... նրանք իրենց Արարչից օժտված են որոշակի անկապտելի իրավունքներով, այդ թվում՝ կյանքի, ազատության և երջանկության ձգտման»: Այսպիսով, հիմնական շեշտադրումը եվրոպական պատմության իրադարձությունը ամերիկյան հասարակությանը փոխանցելն էր: Նման բանավեճերից զատ, հարց էր բարձրացվում, թե որը պետք է լինի Հոլոքոստի համարժեք սահմանումը: Իսրայելում այս հարցն ուներ հստակ պատասխան՝ Հոլոքոստը վեց միլիոն հրեաների ոչնչացումն է: Գերմանիայում ընթացող երեք քննարկումներում հարցն ավելի լայն համատեքստում էր դիտարկվում, քանի որ Գերմանիան պարտադրված էր հիշելու նացիստական դաժանությունների բոլոր զոհերին: Միացյալ Նահանգներում իրավիճակն ավելի բարդ էր: Հոլոքոստը բնութագրելուց, ներկայացնելուց էր կախված, թե որ խմբերը ձեռք կբերեին զոհի կարգավիճակ և կներկայացվեին թանգարանում: Բավական էական տարբերություն կար, թե Հոլոքոստը կբնորոշվեր իբրև վեց միլիոն հրեաների՞, թե՞ տասնմեկ միլիոն զոհերի սպանություն, այն է՝ վեց միլիոն հրեաներ, գումարած հինգ միլիոն այլ զոհեր, այդ թվում՝ երեք միլիոն լեհեր, հարյուրհազարավոր հունգարացիներ և այլն: Կար նաև այլ տարբերակ, այն է՝ եղել են միլիոնավոր զոհեր, միաժամանակ նշելով, որ հրեաների դեպքը հատուկ է, քանի որ կար նրանց իսպառ բնաջնջման նացիոնալ-սոցիալիստների պլանը:

Այս հարցերը քննարկման առարկա էին բավական երկար ժամանակ: Ի վերջո որոշվեց, որ շեշտադրումը պետք է արվի եվրոպական հրեաների հալածանքների և բնաջնջման խնդիրների վրա: Սակայն մշտական ցուցադրության մեջ պետք է լինեն մի քանի բաժիններ, որտեղ պետք է առնվազն հիշատակվեն նաև զոհերի այլ խմբեր՝ նացիստների քաղաքական հակառակորդները, համասեռամոլները, Եհովայի վկաները, մտավոր և ֆիզիկական թերություններ ունեցող հաշմանդամները, այլ էթնիկ խմբեր, պատերազմի խորհրդային գերիները և նույնիսկ հայերը:

Բացումից ի վեր (1993 թ.) ՄՆՀՀԹ-ն մեծ դեր է խաղում քաղաքական հարթությունում: Այն տարաբնույթ բռնությունների դեմ պայքարի առաջամարտիկների թվում է, և դա միանգամայն տեղավորվում է թանգարանի առաքելությունների շրջանակում: Միացյալ Նահանգների պարագայում սա նշանակում է Հոլոքոստի համընդհանուր դասերի ուսուցում և այն հարցի պարբերաբար բարձրացում, թե ինչ կլինի, եթե

բացակայեն ամերիկյան հիմնարար արժեքները[4]*: ՄՆՀՀԹ-ն ԱՄՆ ազգային հաստատություն է՝ ուղղված Հոլոքոստի պատմության վերաբերյալ փաստաթղթերի հավաքմանը, ուսումնասիրությանն ու մեկնաբանմանը, և այս երկրի կողմից ստեղծված հուշային կառույց է:*

Վերոբերյալից եզրակացնում ենք, որ յուրաքանչյուր վեբկայք իր ուրույն գործառույթն է կատարում: Դա նաև պայմանավորված է ևս մի հանգամանքով, որը չպետք է շրջանցել. մի դեպքում պատմական իրողությունը ներկայացնում է տուժող կողմը (Իսրայել), մյուս դեպքում՝ ցեղասպանությանը մասամբ մասնակից կողմը (Հունգարիա), մեկ այլ դեպքում՝ երրորդ կողմը (ԱՄՆ): Հատկանշական է, որ այս երեք պարագաներում տեղեկատվության մատուցումը տարբեր ձևերով է ընթանում՝ պահանջատիրություն, արդարացում, օբյեկտիվություն:

Այսպիսով ՀՀՀԿ-ի վեբկայքը՝ http://old.hdke.hu/, ներկայացնում է Հոլոքոստը Հունգարիայում, նպատակաուղղված է ոչ այնքան պատմական արդարությունը վերականգնելուն, այլ մարելու հակասական տրամադրությունները, ինչ-որ չափով արդարացնելու հենց իրենց՝ հունգարացիներին: Յադ Վաշեմի վեբկայքը՝ http://www.yadvashem.org/, ներկայացնում է բացառապես Հրեից հոլոքոստը (կենտրոնանալով միայն 6 միլիոն հրեաների ցեղասպանության վրա): ՄՆՀՀԹ-ի վեբկայքում՝ http://www.ushmm.org/, ներկայացված է ոչ միայն Հրեից հոլոքոստը, այլ ցեղասպանությունն ընդհանրապես, չնայած առանձնահատուկ տեղ է տրվում հենց Հրեից հոլոքոստին:

МУЗЕЙ И ВЕБСТРАНИЦА: ИДЕОЛОГИЯ И ПОЛИТИКА НА ПРИМЕРЕ ТРЕХ МУЗЕЕВ, ПОСВЯЩЕННЫХ ХОЛОКОСТУ ЕВРЕЕВ

КОБЕЛЯН Х. С.

Резюме

Музей как социальный институт является носителем и распространителем определенной идеологии и политического направления, а вебстраница этого музея предполагает своего рода пропаганду той же идеологии и политики в виртуальном мире на примере вебстраниц трех музеев Холокоста – Яд Вашема, Мемориального комплекса Холокоста в Венгрии и Мемориального музея Холокоста в США. Вебстраница Мемориального комплекса Холокоста в

---

[4] *Հարցի շուրջ մանրամասն տե՛ս* **E. Linenthal.** *Preserving Memory (The Struggle to Create America's Holocaust Museum, 2001);* **Matthias Haß**, *նշվ. աշխ., էջ 12-15:* **Մարության Հ.,** *Միացյալ Նահանգների Հոլոքոստի մեմորիալ թանգարանը ամերիկյան արժեքների համատեքստում,http://www.noravank.am/arm/articles/detail.php?ELEMENT_ID=792&sphrase_id=2531,23VII.2007:* **Նույնի՝** *Հայոց ցեղասպանության և հրեաների Հոլոքոստի հիշողության կառուցվածքային առանձնահատկությունները, էջ 24-46:*

Венгрии, представляя геноцид евреев, утверждает, что львиная доля вины лежит на плечах германских нацистов. Вебстраница Яд Вашема подчеркивает уникальность этого геноцида в истории человечества, а Мемориальный музей Холокоста в США представляет не только Холокост евреев, но и вообще явление “геноцид”, однако с бо’льшим акцентом на Холокост.

MUSEUM AND WEBSITE: IDEOLOGY AND POLITICS ON THE EXAMPLE OF THE THREE MUSEUMS DEDICATED TO THE JEWISH HOLOCAUST

KH. KOBELYAN

Abstract

Museum as a social institution, is a carrier and distributor of a certain ideology and political orientation, and the web page of the museum implies spreading the same ideology and politics in the virtual world. The paper considers this aspect on the example of three Holocaust museums’ web pages – Yad Vashem, Holocaust Memorial Center in Hungary (HMCH) and United States Holocaust Memorial Museum (USHMM). The web page of HMCH represents the genocide of Jews, and claims that the lion's share of the blame rests on the shoulders of the German Nazis. The web page of Yad Vashem highlights the uniqueness of this genocide in the human history, and USHMM’s web page not only represents the Jewish Holocaust, but also generalises the phenomenon of "genocide", with larger emphasis on the Jewish Holocaust.